ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի 21 հունվարի 2016թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Կ .Հ. Հովսեփյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 11 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ ԻՄ 2016-2020թթ ռազմավարական ծրագրի քննարկում*:*
/զեկ. Մ. Ա. Զաքարյան/

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Մ.Ա. Զաքարյանը: Նիստին ներկա էր ԵՊՀ ԻՄ տնօրեն Ս.Ա. Առաքելյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ.Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Մ.Ա. Զաքարյանը: Նա մանրամասը ներկայացրեց մասնաճյուղի ռազմավարական ծրագրի հիմնադրույթները. ըստ որի մանրամասնեց ԵՊՀ ԻՄ 2016-2020թթ. ռազմավարական ծրագիրը, առաքելությունը՝ որպես հյուսիս-արևելյան տարածաշրջանի միակ պետական բարձրագույն կրթօջախ հանդիսանում է կրթական և գիտամշակութային հաստատություն, որի հիմնական նպատակը որակյալ գիտելիքի ստեղծումն ու բազմաբնույթ իրականացումն է պետական ռազմավարության շրջանակներում: Զեկուցողը ներկայացրեց նաև ծրագրի հիմնարար արժեքները, նպատակները: Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումներ՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ: Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները: Ապահովել ուսման որակը հաճախակի ստուգումների և որակելու միջոցով: Անհրաժեշտ է ապահովել տեղեկատվական

տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում: Ընդլայնել դասախոսական կազմի և ուսանողների ներգրավումը հետազոտական աշխատանքներում, նպաստել հետազոտական աշխատանքների միջազգայնացմանը և խրախուսել միջազգային գիտաժողովներին աշխատողների մասնակցությունը: Զարգացնել ուսնողական օժանդակ ծառայությունները, մասնավորապես, ներդնել առարկայական խորհրդատվությունների համակարգ բակալավրի ծրագրի առաջին ուսանողների համար, որոնք կիրականացնեն ավարտական կուրսի ուսանողները:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Մ.Ա. Զաքարյանը ընդգծեց ծրագրի որակյալ կադրային ներուժի ապահովման հիմնադրույթները. կատարելագործել դասախոսական կազմի պաշտոնների տեղակալման չափանիշներ և գործընթացները: Հարկ է նշել նաև, որ բարձրացվի ֆակուլտետի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը, դրանով իսկ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:

Ռազմավարական ծրագրի մեջ կարևորվում է նաև ընթացիկ գերակայությունը. զարգացնել ֆակուլտետի ընդունելության պրոֆիլը, համապատասխանեցնելով տարածաշրջանի տնտեսական զարգացման և աշխատաշուկայի պահանջներին: Քայլեր ձեռնարկել բակալավրիատում ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական մասնագիտությունների գծով հարցազրույցով ընդունելությունը վերականգնելու համար, որը կնպաստի ֆակուլտետի դիմորդների թվի աճին: Ավարտելով խոսքը զեկուցողը ընդգծեց նաև, որ այս և մյուս առաջատար գործընթացների ապահովման համար առաջնահերթ տեղ է գրավում ֆինանսական կայունությունը և արդյունավետ կառավարումը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Կ. Հ. Հովսեփյանը, Գ. Վ. Գուլակյանը, Ա. Վ. Ցուցուլյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հավանության արժանացնել ԵՊՀ ԻՄ 2016-2020թթ ռազմավարական ծրագիրը /կցվում է արձանագրության տեքստին/:

ՆԱԽԱԳԱՀ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ Կ. ՀՈՎՍԵՓՅԱՆ